

1.2.3. Շինարարություն

Բնակարանային շինարարություն: 2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում բնակչության, սեփականաշնորհումից ստացված միջոցների և մարդասիրական օգնության միջոցների հաշվին շահագործման են հանձնվել 82538 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 295 բնակելի շենքեր կամ 1999թ. հունվար-սեպտեմբերին գործարկված մակերեսի 84,9 տոկոսը, մասնավորապես.


♦ **Բնակչության միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 64685 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 257 նոր բնակելի շենքեր, որոնցից համապատասխանաբար. Աշտարակի տարածաշրջանում՝ 4846 և 31, Արարատի՝ 200 և 1, Արտաշատի՝ 6175 և 34, Մասիսի՝ 3400 և 28, Արմավիրի՝ 4123 և 23, Վաղարշապատի՝ 5852 և 20, Գավառի՝ 120 և 1, Սևանի՝ 690 և 5, Կոտայքի՝ 1228 և 9, Հրազդանի՝ 1800 և 15, Նաիրիի՝ 470 և 2, Արթիկի՝ 1687 և 11, Իջևանի տարածաշրջանում՝ 300 և 3, ք.Գյումրիում՝ 864 և 6, ք.Վանաձորում՝ 1169 և 6, ք.Դիլիջանում՝ 353 և 2, ք.Երևանում՝ 31408 քառ.մ և 60 շենք:

♦ **Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 14420 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 6 բնակելի շենքեր, որոնցից ք.Վանաձորում՝ 1180 քառ. մ մեկ նոր բնակելի շենք և 4962 քառ. մ երկու ամրացված բնակելի շենք, Ստեփանավանի տարածաշրջանում՝ 1568 քառ. մ մեկ նոր բնակելի շենք, Գուգարքի տարածաշրջանում՝ 2680 քառ. մ մեկ ամրացված բնակելի շենք, ք. Գյումրիում 4030 քառ. մետր մեկ ամրացված բնակելի շենք

♦ **Մարդասիրական օգնության միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 3433 քառ. մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 32 նոր բնակելի շենքեր, դրանից.

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին ք.Սպիտակում շահագործման են հանձնվել 1826քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 3 բնակելի շենքեր,
- Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների հաշվին Կոտայքի մարզի Նոր-Արտամետ գյուղում շահագործման են հանձնվել 1607 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 29 բնակելի շենքեր:

2000թ. և 1999թ. շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսն ըստ ամիսների, քառ.մետր



Ծանոթություն: Հայաստանի Հանրապետությունում 2000թ. հունվար-սեպտեմբերին իրականացված շինարարության վերաբերյալ; առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է «Կապիտալ շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագրում, ծածկագիր՝ 1230-201:

Հանրապետության մարզերում և ք.երևանում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսը, 2000թ. հունվար-սեպտեմբերին

Մարզերի անվանումը	Բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերես, քառ.մ		Նախորդ տարվա նկատմամբ, տոկոսներով
	2000թ. հունվար- սեպտեմբեր	1999թ. հունվար- սեպտեմբեր	
Ընդամենը	82538	97188	84,9
<i>այդ թվում՝</i>			
Արագածոտն	4846	4014	120,7
Արարատ	9775	6504	150,3
Արմավիր	9975	18220	54,7
Գեղարքունիք	810	5189	15,6
Լոռի	13385	9066	147,6
Կոտայք	5105	5959	85,7
Շիրակ	6581	8314	79,2
Տավուշ	653	2832	23,1
ք.երևան	31408	37090	84,7

Հանրակրթական դպրոցների շինարարություն: 2000թ. հունվար-սեպտեմբերին շահագործման են հանձնվել 4830 աշակերտական տեղով 13 հանրակրթական դպրոց, որոնցից.

♦ **սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 7 հանրակրթական դպրոց՝ 2000 աշակերտական տեղով, մասնավորապես.

- *Լոռու մարզպետարանի* կողմից շահագործման են հանձնվել 6 հանրակրթական դպրոց՝ 1600 աշակերտական տեղով, դրանից՝ ք.Վանաձորում՝ տեխնիկումը վերափոխվել է հանրակրթական դպրոցի՝ 360 աշակերտական տեղով, ամրացվել է մեկ հանրա-կրթական դպրոց՝ 392 աշակերտական տեղով, շահագործման է հանձնվել նոր մեկ հանրակրթական դպրոց՝ 384 աշակերտական տեղով, Գուգարքի տարածաշրջանում՝ շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 192 աշակերտական տեղով, ք.Ստեփանավանում՝ շահագործման են հանձնվել երկու նոր հանրակրթական դպրոց՝ 272 աշակերտական տեղով,

- *Շիրակի մարզպետարանի* կողմից Ախուրյանի տարածաշրջանում ամրացվել և շահագործման է հանձնվել մեկ հանրակրթական դպրոց՝ 400 աշակերտական տեղով:

♦ **Համաշխարհային բանկի վարկի հաշվին Սոցիալական ներդրումների հիմնադրամի** կողմից շահագործման են հանձնվել 4 նոր հանրակրթական դպրոց՝ 1810 աշակերտական տեղով, մասնավորապես.

- ք.Վանաձորում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 260 աշակերտական տեղով, Ախուրյանի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 350 աշակերտական տեղով, Արթիկի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 450 աշակերտական տեղով, Մասիսի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 750 աշակերտական տեղով:

♦ **մարդասիրական միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 2 հանրակրթական դպրոց՝ 1020 աշակերտական տեղով, մասնավորապես.


- *«Հայաստան» համահայկական հիմնադրամի* միջոցների հաշվին Լոռու մարզի Օձուն գյուղում ամրացվել և վերակառուցվել է՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 420 աշակերտական տեղով,

- *այլ մարդասիրական միջոցների հաշվին (ՀՕՖ)* շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 600 աշակերտական տեղով:


Առողջապահական հիմնարկների շինարարություն: Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին ք. Վանաձորում ամրացվել է 90 մահճակալով մեկ հիվանդանոց:

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը: 2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել է 54394,7 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 26710,0 մլն. դրամի: Իրականացված կապիտալ շինարարության ծավալում շիննոնտաժային աշխատանքները կազմել են 49289,1 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 23744,0 մլն.դրամ:

2000թ. իրականացված կապիտալ շինարարության ծավալներն ըստ ամիսների, մլն. դրամ




2000թ. ըստ ամիսների իրականացված կապիտալ շինարարության դինամիկան նախորդ ամսվա նկատմամբ, տոկոսներով




Հանրապետությունում 2000թ. հունվար-սեպտեմբերին իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների

Ֆինանսավորման աղբյուրներ	Իրականացված կապիտալ շինարարությունը, մլն. դրամ (փաստացի գներով)	Տոկոսներով	
		Ընդհանուր նկատմամբ	2000թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով
Իրականացված կապիտալ շինարարությունը, ընդամենը	54394,7	100	113,8
<i>այդ թվում՝ ի հաշիվ՝</i>			
պետական բյուջեի	3540,5	6,5	41,0
սեփականաշնորհումից ստացված միջոցների պահուստային ֆոնդի միջոցների	5480,1	10,1	60անգամ և ավելի
համայնքների միջոցների	12,4	0,0	14,6
Ջարգացման և վերակառուցման Եվրոպական բանկի վարկի	284,1	0,5	161,4
Համաշխարհային բանկի վարկի	511,3	0,9	28,5
Համաշխարհային բանկի գրանտի միջոցների	3816,3	7,0	30,3
Համաշխարհային բանկի գրանտի միջոցների մարդասիրական օգնության միջոցների	68,8	0,1	2անգամ և ավելի
մարդասիրական օգնության միջոցների	4790,5	8,8	84,7
<i>դրանից՝</i>			
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	396,6	0,7	116,6
ՄԱԿ-ի միջոցների	411,9	0,8	68,2
Ամերիկյան Կարմիր խաչի միջոցների	895,7	1,6	47,5
Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների	373,9	0,7	93,1
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	1915,4	3,5	4 անգամ և ավելի
այլ մարդասիրական օգնության միջոցների	797,0	1,5	40,6
օտարերկրյա ներդրողների միջոցների	4329,9	8,0	6 անգամ և ավելի
կազմակերպությունների միջոցների	21346,7	39,3	3 անգամ և ավելի
բնակչության միջոցների	10214,1	18,8	82,7

2000թ. հունվար-սեպտեմբերին իրականացված կապիտալ շինարարության տեսակարար կշիռը, ըստ ֆինանսավորման աղբյուրների, ընդհանուր ծավալում (տոկոսներով)



2000թ. հունվար-սեպտեմբերին իրականացված կապիտալ շինարարության ծավալը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, ըստ ֆինանսավորման աղբյուրների (տոկոսներով)



2000թ. հունվար-սեպտեմբերին **պետական բյուջեի միջոցների** հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 3540,5 մլն.դրամ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 2735,8 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 3175,8 և 2374,8 մլն.դրամ:

Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին իրականացված ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության ծավալը կազմել է 5480,1 մլն. դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների ծավալը՝ 5154,8 մլն.դրամ:

Պահուստային ֆոնդի հաշվին իրականացված ոչ արտադրական կապիտալ շինարարության ծավալը կազմել է 12,4 մլն.դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների գծով՝ 10,8 մլն.դրամ:

Համայնքների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 284,1 մլն.դրամ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 155,6 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 139,3 և 10,8 մլն.դրամ:

Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի կողմից տրամադրված վարկի հաշվին արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա իրականացվել է 511,3 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների ծավալը կազմել է 385,6 մլն.դրամ:

Համաշխարհային բանկի տրամադրած վարկի հաշվին 2000թ. հունվար-սեպտեմբերին իրականացվել է 3816,3 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական

նշանակության օբյեկտների գծով՝ 3593,1 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 3354,2 և 3131,0 մլն.դրամ:

Համաշխարհային բանկի կողմից տրամադրած **գրանտի** հաշվին «Ջրային հատվածի զարգացման» ծրագրի նախապատրաստական աշխատանքների համար իրականացվել են 68,8 մլն.դրամի կապիտալ ներդրումներ:

Մարդասիրական օգնության միջոցների հաշվին 2000թ. հունվար-սեպտեմբերին իրականացվել է 4790,5 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 157,3 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 4543,7 և 151,8 մլն.դրամ, դրանից՝

♦«**Հայաստան» համահայկական հիմնադրամի** միջոցների հաշվին ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա իրականացվել են 396,6 մլն.դրամի շինարարական աշխատանքներ:

♦**ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի** միջոցների հաշվին բնակելի շենքերի և սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների շինարարության համար իրականացվել է 411,9 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների գծով՝ 410,7 մլն.դրամ:

♦**Ամերիկյան Կարմիր Խաչի** միջոցների հաշվին իրականացված բնակարանային շինարարության ծավալը կազմել է 895,7 մլն.դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների ծավալը՝ 851,8 մլն.դրամ:

♦**Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի** միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 373,9 մլն.դրամ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 18,0 մլն.դրամ:

♦**Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված** միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 1915,4 մլն.դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների գծով՝ 1723,8 մլն.դրամ:

Օտարերկրյա ներդրողների միջոցների հաշվին իրականացվել է 4329,9 մլն.դրամի ոչ արտադրական կապիտալ շինարարություն, որից շինմոնտաժային աշխատանքների ծավալը կազմել է 3133,7 մլն.դրամ:

Կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվել է 21346,7 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 18442,6 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 19584,3 և 16850,4 մլն.դրամ:

Բնակչության միջոցների հաշվին անհատական բնակելի շենքերի, արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա իրականացվել է 10214,1 մլն.դրամ, այդ թվում անհատական բնակելի շենքերի գծով՝ 8248,9 մլն.դրամ շինարարական աշխատանքներ, արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 1965,2 մլն.դրամ:

Շինարարության ծավալները 2000թ. հունվար-սեպտեմբերի, ըստ տնտեսության ճյուղերի

(*փաստացի գներով, մլն. դրամ*)

	Հիմնական միջոցների գործարկումը	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով		
		Ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	Հիմնական միջոցների գործարկումը	Ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	25817,7	54394,7	49289,1	100	100	100
<i>այդ թվում՝</i>						
Արդյունաբերություն	468,8	3477,2	2835,2	1,8	6,4	5,7
Գյուղատնտեսություն	2808,5	4521,2	3650,0	10,9	8,3	7,4
Տրանսպորտ և կապ	4321,1	17625,2	16378,3	16,7	32,4	33,2

Առևտուր	613,4	1045,5	839,6	2,4	1,9	1,7
Բնակարանային տնտեսություն	9512,0	12608,3	12308,4	36,8	23,2	25,0
Կոմունալ տնտեսություն	3534,1	6268,0	5316,5	13,7	11,5	10,8
Առողջապահություն	235,8	547,7	523,3	0,9	1,0	1,1
Կրթություն	1231,9	2292,9	2249,4	4,8	4,2	4,6
Մշակույթ	462,5	670,9	580,4	1,8	1,3	1,2
Տնտեսության այլ ճյուղեր	2629,6	5337,8	4608,0	10,2	9,8	9,3

Հիմնական միջոցների և հզորությունների գործարկումը: 2000թ. հունվար-սեպտեմբերին գործարկվել են 25817,7 մլն.դրամի հիմնական միջոցներ, այդ թվում արտադրական նշանակության գծով՝ 8388,0 մլն.դրամ:

Համաշխարհային բանկի վարկի հաշվին վերականգնվել և շահագործման են հանձնվել. Աբովյանի տարածաշրջանում 40 հատ և Արմավիրի մարզում 63 հատ ջրաչափական կառույցներ, Արտաշատի տարածաշրջանում՝ 63 հատ ջրաչափական կառույցներ և մեկ պոմպակայան, Թալինի տարածաշրջանում՝ 82 հատ ջրաչափական կառույցներ, Արմավիրի ոռոգման համակարգի մայր ջրանցք 4404 գծամետր երկարությամբ, Արմավիրի և Արագածոտնի մարզերում՝ 12 խորքային հորեր, Ապարանի տարածաշրջանում՝ ջրամբարի մարիչ, ոռոգման ջրթող և աշտարակ, Արզնի-Շամիրամի II կարգի ջրանցք 21232 գծամետր երկարությամբ, Արմավիրի տարածաշրջանում մայր ջրանցք 3817 գծամետր երկարությամբ, Եղեգնաձորի տարածաշրջանում պոմպակայանին ենթակա հողերի ինքնահոս ոռոգման վերականգնում 10400 գծամետր երկարությամբ, Արարատի տարածաշրջանում 129,5 կմ ցամաքուրդային և Վաղարշապատի տարածաշրջանում մեկ ցամաքուրդային համակարգերի մաքրում և վերականգնում և Ստորին Հրազդանի ոռոգման համակարգի երկրորդ կարգի ջրանցքը 6850 գծամետր երկարությամբ, մի շարք բնակավայրերի 43695 գծամետր ներտնտեսային ոռոգման ցանցերը, ինչպես նաև 78451 գծամետր երկարությամբ խմելու և ոռոգման ջրագծեր:

Շինարարության հիմնական ցուցանիշներն 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ մարզերի

(*վիաստացի գներով, մլն. դրամ*)

Մարզերի անվանումը	Հիմնական միջոցների գործարկումը	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով		
		Ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	Հիմնական միջոցներ	Կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	25817,7	54394,7	49289,1	100	100	100
<i>այդ թվում՝</i>						
Արագածոտն	1195,7	1529,5	1494,6	4,6	2,8	3,0
Արարատ	2202,8	3247,3	3243,3	8,5	6,0	6,6
Արմավիր	2217,0	2115,9	2067,6	8,6	3,9	4,2
Գեղարքունիք	346,5	594,6	541,1	1,4	1,1	1,1
Լոռի	1858,7	4126,4	4049,1	7,2	7,6	8,2
Կոտայք	732,7	1680,6	1467,1	2,8	3,1	3,0
Շիրակ	1414,5	5547,8	5112,3	5,5	10,2	10,4
Սյունիք	551,5	1925,4	1417,3	2,1	3,5	2,9
Վայոց Ձոր	434,5	548,4	500,0	1,7	1,0	1,0
Տավուշ	353,6	508,6	504,7	1,4	0,9	1,0
ք.երևան	14510,2	32570,2	28892,0	56,2	59,9	58,6

Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ: 2000թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վերանորոգվել են 12032 աշակերտական տեղով 22 հանրակրթական դպրոց:

Սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից *Համաշխարհային բանկի վարկի* հաշվին ընդհանուր վերանորոգման են ենթարկվել Թեքեյան մշակութային կենտրոնը և 1740 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց ք.Երևանում:

Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների հաշվին վերանորոգվել են 2317 աշակերտական տեղով 6 հանրակրթական դպրոցներ, այդ թվում՝ Նորամարզ գյուղում՝ 330 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց, Հայանիստ գյուղում՝ 386 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց, Ջերմուկի թիվ 2 հանրակրթական դպրոց 907 աշակերտական տեղով և ճամբարակ գյուղի 694 աշակերտական տեղով երեք հանրակրթական դպրոցներ:

Գեղարքունիքի մարզպետարանի կողմից *սեփականաշնորհումից ստացված միջոցների* հաշվին վերանորոգվել են 6375 աշակերտական տեղով 14 հանրակրթական դպրոց:

Կոտայքի մարզպետարանի կողմից *սեփականաշնորհումից ստացված միջոցների* հաշվին վերանորոգվել է 1600 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց:

Շինարարությունն աղետի գոտում

Բնակարանային շինարարություն: 2000թ. հունվար-սեպտեմբերին *երկրաշարժից տուժած* քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության, սեփականաշնորհումից ստացված միջոցների և մարդասիրական օգնության միջոցների հաշվին շահագործման են հանձնվել 20619 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 37 նոր բնակելի շենքեր կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 25,0 տոկոսը:

Հանրակրթական դպրոցների շինարարություն: 2000թ. հունվար-սեպտեմբերին շահագործման են հանձնվել 4080 աշակերտական տեղով 12 հանրակրթական դպրոց, որոնցից.

♦ *սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին* շահագործման են հանձնվել 7 հանրակրթական դպրոց՝ 2000 աշակերտական տեղով, մասնավորապես.

- *Լոռու մարզպետարանի* կողմից շահագործման են հանձնվել 6 հանրակրթական դպրոց՝ 1600 աշակերտական տեղով, դրանից ք.Վանաձորում՝ տեխնիկումը վերափոխվել է հանրակրթական դպրոցի՝ 360 աշակերտական տեղով, ամրացվել է մեկ հանրակրթական դպրոց՝ 392 աշակերտական տեղով, շահագործման է հանձնվել նոր մեկ հանրակրթական դպրոց՝ 384 աշակերտական տեղով, Գուգարքի տարածաշրջանում՝ շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 192 աշակերտական տեղով, ք.Ստեփանավանում՝ շահագործման են հանձնվել երկու նոր հանրակրթական դպրոց՝ 272 աշակերտական տեղով,

- *Շիրակի մարզպետարանի* կողմից Ախուրյանի տարածաշրջանում ամրացվել և շահագործման է հանձնվել մեկ հանրակրթական դպրոց՝ 400 աշակերտական տեղով:

♦ *Համաշխարհային բանկի վարկի հաշվին Սոցիալական ներդրումների հիմնադրամի* կողմից շահագործման են հանձնվել 3 նոր հանրակրթական դպրոց՝ 1060 աշակերտական տեղով, մասնավորապես.

- ք.Վանաձորում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 260 աշակերտական տեղով, Ախուրյանի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 350 աշակերտական տեղով, Արթիկի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 450 աշակերտական տեղով:

♦ *մարդասիրական միջոցների հաշվին* շահագործման են հանձնվել 2 հանրակրթական դպրոց՝ 1020 աշակերտական տեղով, մասնավորապես.

- *“Հայաստան” համահայկական հիմնադրամի* միջոցների հաշվին Լոռու մարզի Օձուն գյուղում ամրացվել և վերակառուցվել է՝ մեկ հանրակրթական դպրոց 420 աշակերտական տեղով,

-այլ մարդասիրական միջոցների հաշվին (ՀՕՖ) շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 600 աշակերտական տեղով:

Առողջապահական հիմնարկների շինարարություն: Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին ք. Վանաձորում ամրացվել է 90 մահճակալով մեկ հիվանդանոց:

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը: Հանրապետության աղետի գոտում 2000թ. հունվար-սեպտեմբերին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման վրա ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 9224,6 մլն. դրամի կապիտալ շինարարություն կամ հանրապետությունում կատարված շինարարության ընդհանուր ծավալի 17,0 տոկոսը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 1702,9 մլն. դրամ (6,4տոկոս):

2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության աղետի գոտում իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների

(վիաստացի զներով, մլն. դրամ)

	Հիմնական միջոցների գործարկումը	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով		
		Ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	Հիմնական միջոցներ	Կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	3215,6	9224,6	8773,9	100	100	100
<i>այդ թվում՝ ի հաշիվ՝</i>						
Սեփականաշնորհումից ստացված միջոցների	1732,7	4413,9	4101,4	53,9	47,9	46,8
համայնքերի միջոցների	56,9	19,0	19,0	1,8	0,2	0,2
Հանաշխարհային բանկի վարկի	268,3	145,8	145,8	8,3	1,6	1,7
մարդասիրական օգնության միջոցների դրանից	584,7	1922,1	1859,4	18,2	20,8	21,2
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	248,8	394,4	394,4	7,8	4,3	4,5
ՄԱԿ-ի միջոցների	-	87,6	86,4	-	0,9	1,0
Ամերիկյան Կարմիր խաչի միջոցների	-	895,7	851,8	-	9,7	9,7
Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների	26,4	41,9	41,9	0,8	0,5	0,5
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	-	175,6	158,0	-	1,9	1,8
այլ մարդասիրական օգնության միջոցների	309,5	326,9	326,9	9,6	3,5	3,7
օտարերկրյա ներդրողների միջոցների	-	455,7	425,2	-	4,9	4,8
կազմակերպությունների միջոցների	30,7	1669,8	1633,7	0,9	18,1	18,6
բնակչության միջոցների	542,3	598,3	589,4	16,9	6,5	6,7

2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության աղետի գոտում շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի

(վիաստացի զներով, մլն. դրամ)

	Հիմնական միջոցների գործարկումը	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով		
		Ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	Հիմնական միջոցներ	Կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	3215,6	9224,6	8773,9	100	100	100
<i>այդ թվում՝</i>						
Վրագածոտնի մարզ	0,9	73,7	73,4	0,0	0,8	0,8
Լոռու մարզ	1781,6	3618,4	3584,2	55,4	39,2	40,8
Շիրակի մարզ	1187,1	5199,4	4787,1	36,9	56,4	54,6
Տավուշի մարզ	246,0	333,1	329,2	7,7	3,6	3,8

Ծանոթություն. «Շինարարությունն աղետի գոտում» մասունքը ընդգրկվում են միայն «Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրի» շրջանակում և ձեռնարկությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության, ինչպես նաև բնակչության միջոցների հաշվին շահագործման հանձնված բնակելի շենքերի շինարարության ցուցանիշները: Դրանով պայմանավորված, սույն մասունք արտացոլված ցուցանիշները տարբերվում են աղետի գոտին աշխարհագրական կտրվածքով ձևավորող մարզերի շինարարության հանրագումարային ցուցանիշներից, քանզի «Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրից» զատ, այդ մարզերում իրականացվել են նաև այլ՝ ընդհանուր հանրապետական ծրագրերով շինարարական աշխատանքներ (ճանապարհաշինություն, ոռոգման համակարգերի շինարարություն և այլն):